ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.03.2022թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ
ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-LO-2022/32

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանս, ուսումնասիրելով թիվ ԳԲՔԱ-LO-2022/32 բողոքի քննության շրջանակներում «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված թիվ «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցումից հանելու վերաբերյալ միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև ելնելով հանրային շահերից,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ներկայացված միջնորդությունը բավարարել ամբողջությամբ:

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով գնման ընթացակարգը՝ 6-րդ չափաբաժնի մասով, հանել կասեցումից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**